Ամփոփելով վերոգրյալը՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ սույն գործի՝ վերը նշված փաստերը վկայում են այն մասին, որ հայցը բավարարելով՝ Դատարանը գործը սխալ է լուծել, իսկ դրան հանգեցրած դատական սխալի առկայության մասին բողոքաբերի փաստարկները հիմնավորված են, հետևաբար առկա է համապատասխան հիմք՝ բողոքարկված վճիռը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի կիրառմամբ բեկանելու և փոփոխելու՝ հայցը մերժելու մասին նոր դատական ակտ կայացնելու վերաբերյալ բողոքաբերի պահանջը բավարարելու համար, և հիմք ընդունելով սույն վեճի առանձնահատկությունը և նկատի ունենալով, որ նշված լիազորության իրացումը թելադրվում է արդարադատության արդյունավետության՝ գործի քննության անհարկի ձգձգումներից խուսափելու անհրաժեշտությանը հանգող շահերով, որպիսի վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունների ներքո՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ բողոքի նշված հիմքի և հիմնավորումների շրջանակներում պետք է վերաքննիչ բողոքը բավարարել՝ Դատարանի վճիռը բեկանել և փոփոխել՝ հայցը մերժել:

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին Վերաքննիչ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլուխ) կանոններին համապատասխան:

Հաշվի առնելով այն հանգամանքները, որ բողոքարկվող վճիռը ենթակա է բեկանման և փոփոխման, իսկ հայցը՝ մերժման, միևնույն ժամանակ Պատասխանողի կողմից դատական ծախսերի բաշխման հետ կապված պահանջներ չեն ներկայացվել, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ, 381-րդ, 387-րդ և 391-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. ՀՀ ներքին գործերի նախարարության անունից բերված վերաքննիչ բողոքը բավարարել՝ թիվ ԵԴ2/38215/02/23 քաղաքացիական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 23.01.2025 թվականի կայացրած վճիռը բեկանել և փոփոխել.

1.1 Անհատ ձեռնարկատեր Անուշ Էդվարդի Պետրոսյանի հայցն ընդդեմ ՀՀ ներքին գործերի նախարարության՝ ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից անհատ

ձեռնարկատեր Անուշ Էդվարդի Պետրոսյանի և ՀՀ ներքին գործերի նախարարության միջև 11.10.2023 թվականին կնքված թիվ «ՀՀ ՆԳՆ ԳՀԾԶԲ-Սերվեր/2023/Հ-70» ծածկագրով պայմանագրի միակողմանի մասնակի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան հրապարակման պահից տասնհինգօրյա ժամկետում:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ Ժ. ԱՍԱՏՐՅԱՆ	ԴԱՏԱՎՈՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ	ԴԱՏԱՎՈՐ Ն.ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Որոշումը մտել է օրինական ուժի մեջ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ **Ժ. ԱՍԱՏՐՅԱՆ**